հարցանել այլոց պարզ բանիւ՝ արար պատասխանի 'ի բարբառ Արաբացւոց՝ թէ հաւատով քրիստոնեայ եմք և 900 ամաց հետէ յԵրուսաղէմ հետեւակ Հայոց, կերակուր և հանդերձ մեր 'ի վանաց նոցին, որպէս վկայեն այլազգիք և հրեայք իսկ։ Մատեան Ղպթիք և ասեն՝ քրիստոնեայ եմք և ազգ ինքնագլուխ, և 'ի լինել տարաձայնութեան 'ի վերայ բանից սոցա՝ զօրացեալ Ցունաց գոչէին, զի՞նչ միաբանութիւն է սոցա ընդ Հայս, զի զգլխաւոր տօնս իւրեանց ընդ Ցունաց տօնեն և պատկանին նոցա, զնոյն ասէր և Դատաւորն։ Քանզի յառաջագոյն մինչ դատաստան լինէր 'ի Կոստանդինուպօլիս 'ի վերայ այսր խնդրոյ, Ցոյնք ծախեալ գումարս լինչ, առեալ գիր 'ի Կուսակալաց Դամասկոսի. նոյնպէս և զարդիս 'ի Սիւլէյման Փաշայէ՝ լինիլ հետեւակ երից ազգաց և տեղեաց նոցին Ցունաց։ Եւ 'ի հարցանել վերստին բազմականաց՝ խոստովան եղեն Ղպթիք, թէ 'ի դաւանութիւնս՝ եկեղեցւոյն Հայոց և 'ի Թափօրս 'ի տաճարին Ս. Յարութեան հետեւին նոցա։ Զնոյն ասացին և Ասորիք և յաւելին եւս թէ Պատրիարքն մեր հաստատի 'ի Տէրութենէ գրով Պատրիարքին Հայոց։ Իբրեւ եառս Դատաւորն թէ վրիպեցաւ 'ի խորհրդոց իւրոց, եհարց զարձեալ ցբազմականսն, և նոքա ամենեքին լուեցին, և մի ոմն 'ի նոցանէ ասէր՝ չգիտեմ խսպառ բազմելոց։ Յայնժամ Նուրի Էֆէնտի գրեաց զանուանս ժողովելոցն և ասէ երից՝ հարցմանս այսմիկ չգիտեմ պատասխանէք, սակայն 'ի հարցանելն այլով եղանակաւ 'ի կողմանէ Ցունաց, գիտեմ խոստովանիք՝ ոչ երբէք լսեմ։

Ընդ այս զայրանային Դատաւորն և ժողովն, մանաւանդ զի տիրաբար դատէր՝ խօսէր և գրէր զամենայն ինչ, որոյ վասն զօրացաւ բարբառ Դատաւորին 'ի վերայ Նուրեայ։ Եւ զկնի այսր կոչեցին զայլազգի դռնապանս Սուրբ Յարութեան, որք և ասացին՝ Ղպթիք և Ասորիք 'ի տաճարի անդ 'ի Թափօրս և 'ի Ճրագալուցի Զատկին 'ի միասին ընդ Հայոց շրջին երանեն և մտանեն։ Իսկ վասն Հապէշաց ոչ գիտեմք, զի նոքա ոչ ունին տեղի և Թափօր 'ի տաճարի անդ։ Արձանագրեցան բանք երից ազգաց և վկայութիւնք դռնապանաց, եւ որոշեցաւ երից ազգաց լինել հետեւակ Հայոց, և արձակեցաւ ժողովն։